# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

## ԲԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

*Հայրապետական տնօրէնութիւնք.*

Կոնդակ *Սարգիս եպիսկոպոսին Սևանայ, թոյլ տալ Վահան վարդապետին կրել վեղար։ Թ.* 988.

— *Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանին, որով կարգում է Դիւանապետ Վեհափառ Կաթուղիկոսի։ Թ.* 992.

— *Գեր. Տ. Գէորգ արքեպիսկոպոսի անունով, որով պատուիրում է գումարել միաբանական ժողով Մայր Աթոռի տնտեսական վիճակի բարւօքման առթիւ։ Թ.* 1022.

— *Ռուսահայոց վեց թեմի առաջնորդների անունով, որով պատուիրում է մինչև նոյն թուի դեկտեմբերի* 20-*ը ներկայացնել երկու սեռի չնչագրութիւնը համաձայն նախկին սահմանադրական կոնդակների, նաև իրաւասու ծխականների ցուցակները։ Թ. Թ.* 1101, 1102, 1097, 1096, 1099 *և* 1100.

— *Ամեն. Պատրիարքի անունով Գրիգոր Բէհեանի ամուսնալուծութեան առթիւ։ Թ.* 1106.

— *Նոյն Պատրիարքին Յակոբ Բագրատունու ամուսնալուծութեան համար։ Թ.* 1107.

— *Գրութիւն Պարսից արտաքին գործոց Նախարարին խնամք տանելու պարսկահպատակ հայերին։ Թ.* 1108.

— Տփխիսի Հայոց Կոնսիստորիային Մերհի Գասպարեան Յակոբեանի ամուսնալուծութեան համար։ Թ. 1109.

— Տփխիսի Առաջնորդին Շուշանիկ Պապիկեան Աւոյեանցի ամուսնալուծութեան համար։ Թ. 1110.

— Աստրախանի Առաջնորդի անունով, որով հաստատուեց Եկատերինոդարի հայ աղքատաց եկեղեցական հոգաբարձութիւնը։ Թ. 1117.

— Պ. Աղէքսանդր Յովհաննեանի անունով, նոր ընտրուած հոգաբարձուներին վերստին իրենց պաշտօնին հրաւիրելու համար։ Թ. 1118.

— Զաւէն վարդապետի անունով, Շուշուայ հայ տիկնանց խնդրանօք նուէրներ ժողովելու նոր բացուելի որբանոցի համար։ Թ. 1119.

— Էջմիածնի Սինոդի անունով, որով պատուիրեց Տփխիսու Ս. Սարգիս ուխտատեղին վերածել ծխական եկեղեցու և արդիւնքը յատկացնել ծխական դպրոցին։ Թ. 1148.

— Կ. Պոլսոյ Ամեն. Պատրիարքի անունով, որով պատուիրվում է կազմել հոգևորականներից և աշխարհականներից խառն ժողով և քննութեան ենթարկելով այրիացած քահանաների ամուսնութեան խնդիրը ուղարկել ժողովի կարծիքը։ Թ. 1155.

— Երուսաղիմայ Ամեն. Պատրիարքի անունով, նոյն մտքով։ Թ. 1156.

— Սսոյ Ս. Կաթուղիկոսի անունով, նոյն մտքով։ Թ. 1157.

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, նոյն իմաստով, Թ. 1158.

— Նոյն Սինոդի անունով փոխառութիւն արած 3537 րբլ. 40 կպ. Շուշուայ թեմ. դպրոցին ուղարկելու մասին։ Թ. 1168։

— Նոյն Սինոդին, որով պատուիրուեց Վաղարշապատի վերաբնակիչներին գիւղի տեղ և վարելահող տալ մշակութեան համար։ Թ. 1172.

— Վանայ առաջնորդական փոխանորդի անունով, որով լուծուեց վանեցի Խաչատուր Սմբատեանի իւր կնոջ Արմենուհւոյ հետ եղած պսակը և արտօնուեց նոցա կրկին ամուսնութիւն։ Թ. 1197.

— Երևան Փոխ Թեմակալ Յուսիկ եպիսկոպոսի անունով, որով պատուիրուեց Ալէքսանդրապօլում փոխանորդի ընտրութիւն կատարել տալ։ Թ. 1207.

— Վաղարշապատի գործակալի անունով, որով լուծուեց Եալովացի Խաչիկ Թորոսեանի պսակը իւր կնոջ Կարնեցի Զուարթ Այվազեանի հետ, և արտօնուեց նոցա կրկին ամուսնութիւն։ Թ. 1214.

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով պատուիրուեց 500 րբլ. տալ պատգամաւորների ժողովի ծախսերի համար, Թ. 1212.

Գրութիւն յանուն Պարսից Արեգակնափայլ Շահին Տ. Եզնիկ արքեպիսկոպոսի Ատրպատականի առաջնորդութեան առթիւ։ Թ. 1240.

Գրութիւն յանուն պարսից Թագաժառանգի, նոյն առթիւ։ Թ. 1241.

Գրութիւն յանուն Դաւրէժի Նահանգապետին նոյն իմաստով։ Թ. 1242.

— Յանուն Գէորգ արքեպիսկոպոսի, որով Մայր Աթոռի տնտեսութեան բարւոքման մասին տասն յօդուածներն հաստատուեցին գործադրութեան համար։ Թ. 1262.

— Յանուն Եզնիկ արքեպիսկոպոսի Ապահունւոյ, որով Ատրպատականի առաջնորդ կարգուեց։ Թ. 1265.

— Ընդհանրական յանուն հայ ժողովրդեան Թեմին Ատրպատականի, նոյն առթիւ։ Թ. 1266.

— Սինոդին, որով պահանջուեց Գեր. Սուքիաս, Սեդրակեան, Ներսէս, Գարեգին Արքեպիսկոպոսների, Յուսիկ եպիսկոպոսի, Մեսրոպ, Մխիթար, Եղիշէ Մուրադեան, Կարապետ, Մատթէոս, Գարեգին, Խորէն Մուրադբէգեան, Եղիշէ Ահարոնեան և Իսահակ վարդապետների ծառայութեան ցուցակները։ Թ. 1268.

— Նոյն Սինոդին, որին պատուիրուեց բոլոր քահանաներին շրջաբերական տալ խնամէական ուղիղ ճիւղագրութեան հրահանգի մասին։ Թ. 1276.

— Վրաստանի Առաջնորդին, որին պատուիրուեց Զարկօ գիւղացի Յակոբ Յակոբեանցին արտօնել կրկին ամուսնանալու։ Թ. 1277.

— Պետերբուրգի եկեղեցական խորհրդին, որին պատուիրուեց Նոր-Ջուղայի հայոց դպրոցի Նպաստի տուչութիւնը շարունակել։ Թ. 1279.

— Աստրախանի հայոց Առաջնորդ Գեր. Եզնիկ արքեպիսկոպոսին, որով թոյլատրուեց Սողոմոն Տատուրեան Այվազեանին նորից ամուսնանալու։ Թ. 1309.

— Կեչառիսի վանքի հոգաբարձութեան անունով, որով արտօնութիւն տրուեց բարեկարգել վանքի տնտեսական վիճակը։ Թ. 1314.

— Ամերիկայի Առաջնորդ Գեր. Յովսէփ Արքեպիսկոպոսի անունով, որով պատուիրուեց, եթէ օրինաւոր չէ համարում երեսփոխանական ժողովի կազմը, գումարել տալ նոր կազմ և ըստ այնմ որոշել առաջնորդի հրաժարման խնդիրը։ Թ. 1316.

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով կարգուեց Յուսիկ վարդապետը Մայր Աթոռի ներկայացուցիչ Ս. Էջմիածնի կալուածների խնդրի առթիւ Հանդ. Նահապետ եպիսկոպոսի փոխարէն։ Թ. 1317.

— Գեր. Սուքիաս արքեպիսկոպոսին, որով կարգուեց վանական կառավարութեան նախագահ, իսկ Կիւրեղ,

Խոսրով. Ընձակ և Արտակ վարդապետները—անդամներ։ Թ. 1322.

— Մխիթար վարդապետին, որով կարգուեց Տպարանի նախագահ, իսկ Իսահակ և Երեմիա վարդապետները։—անդամներ։ Թ. 1323.

— Կարապետ վարդապետին, որով կարգուեց «Արարատ» ամսագրի խմբագիր. իսկ օգնականներ՝ Գարեգին և Երուանդ վարդապետները։ Թ. 1324

— Գեր. Գէորգ արքեպիսկոպոսի, որով հաստատուեցան յիշեալ ընտրուած պաշտօնեաները։ Թ. 1325.

— Աստրախանի Կոնսիստորիայի անունով, որով թոյլատրուեց Շուշեցի Միքայէլ Սարգսեանցին նորից ամուսնանալու։ Թ. 1332.

— Տփխիսի Առաջնորդի անունով, որով թոյլատրուեց Ստեփան Մհի. Միրզայեանին վերստին ամուսնանալու։ Թ. 1333.

— Ատրպատականի հայոց Առաջնորդին, որով արտօնութիւն տրուեց պարսկահպատակ Բարսեղ Մելիք Գրիգորեան և Սիրանոյշ Գաբրիէլեան ամուսիններին նորից ամուսնանալու։ Թ 1359։

— Վաղարշապատի ծխական դպրոցի հոգաբարձութեան, որով կարգադրուեց Շողակաթի վանքը վերածել ծխական եկեղեցու և վարելահողերի արդիւնքը յատկացնել դպրոցի օգտին։ Թ 1364.

— Երևանի Կոնսիստորիային նոյն իմաստով։ Թ. 1365.

— Վանական Կառավարութեան նոյն իմաստով։ Թ. 1366.

— Երևանի Կոնսիստորիային, որով պատուիրուեց տալ Ներսէս քահանայ Տ. Մինասեանին 30—40 ծուխ Գորիսու Նոր քաղաքամասում։ Թ. 1384.

— Կարսի հոգևոր կառավարութեան անունով, որով մերժուեց տաճկաստանցի Արշակ Պօղոսեանի խնդիրը լուծելու պսակը Անգլին կնոջ հետ։ Թ. 1402.

— Խաչիկ վարդապետի անունով, որ կարգուեց թանգարանապետ։ Թ. 1411.

— Մեսրոպ վարդապետի անունով, որով կարգուեց մատենադարանապետ։ Թ. 1412.

— Խորէն վարդապետ Լազարեանի անունով, որով կարգուեց տպարանական ժողովի անդամ։ Թ. 1413.

— Գեր. Ղևոնդ եպիսկոպոսի անունով, որով կարգուեց Մայր Տաճարի Լուսարարապետ։ Թ. 1413.

— Վանական Կառավարութեան անունով, որով պատուիրուեց իւր անդամներից նշանակել՝ շտեմարանապետ, մառանապետ և տնտես։ Թ. 1415.

— Սինօդին, որով Իսահակ վարդապետը Մայր Աթոռի կողմից ներկայացուցիչ կարգուեց Պետական դումայի ընտրութեան համար։ Թ. 1431.

— Տ. Յուսիկ եպիսկոպոսին և Տ. Մեսրոպ ու Տ. Մխիթար վարդապետներին, որոնց պատուիրուեց Տփխիս գնալու հանգուցեալ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի թաղման ներկայ լինելու։ Թ. 1452.

— Տփխիսու Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան, որով Սիրական Տիգրանեանը տեսուչ կարգուեց միամեայ ժամանակով։ Թ. 1470.

— Սինօդին, որով Կարապետ վարդապետը փոխանորդ կարգուեց Ալէքսանդրապօլի։ Թ. 1471.

— Սինօդին, որին պատուիրուեց էջմիածնապատկան անտառների համար բլանկ տպել տալու։ Թ. 1483.

— Սինօդին, Յովել վարդապետի Հռոմոսի վանքի վանահայր լինելու մասին։ Թ. 1506.

— Սինոդին, որին պատուիրուեց Տաթեւի վանքում նոր չոտատ սահմանելու մասին։ Թ. 1508.

— Ղեւոնդ եպիսկոպոսին. որին պատուիրուեց Երեւմիա աբեղային վարդապետական աստիճան տալու։ Թ. 1518.

— Երեմիա վարդապետին. Մ. Աթոռոյ հիւրատան հիւրընկալ կարգուելու մասին։ Թ. 1521.

— Ղեւոնդ եպիսկոպոսին, որին պատուիրուեց՝ Նահապետ Սարգսեանին դպրութեան չորրորդ աստիճան տալու։ Թ. 1527.

— Շրջաբերական կոնդակներ թեմական դպրոցներին կազմել ուսուցչական ժողովից մի յանձնաժողով թեմ. դպրոցների ծրագիր պատրաստելու։ Թ. 1568.

Շրջաբերական կոնդակներ Կոնսիստորիաներին, թոյլատրել հոգեւոր կառավարութիւններին հրաման տալ աղգականութեան 7-րդ խնամութեան 5-րդ և կնքահայրութեան 3-րդ աստիճանները պսակելու։ Թ. Թ. 1582. 1583, 1584, 1585, 1586 և 1587.

— Ռուսաստանի ընդհանուր հայ ժողովրդեան, Կովկասի արկածեալների մասին եղող հանգանակութեան նպաստելու համար։ Թ. 1594.

— Սինոդին, որին պատուիրուեց Յուսիկ վարդապետին լիազօրութիւն տալ Բեսսարաբիոյ վիճակային արդիւնքները քննելու համար։ Թ. 1597.

— Սինոդին, որին պատուիրուեց 1907 տարու համար նախահաշիւ կազմելու։ Թ. 1599.

— Տ. Աշոտ եպիսկոպոսին, որով պատուիրուեց գնալ Ռուսաստանի քաղաքները Շուշուայ թեմ. դպրանոցին համար դրամ հանգանակելու։ Թ. 1633.

— Աստրպատական Առաջնորդ Տ. Եղնիկ Արքեպիսկոպոսին, որին պատուիրուեց Ատրպատականի բոլոր վիճակ-

ները իր իրաւասութեան ներքոյ առնել և օրինաւոր կերպով էլ ու մուտքի հաշիւները պահանջել։ Թ. 1662.

— Տ. Ղևոնդ եպիսկոպոսին, որը կարգուեց Նախագահ վանակ. կառավարութեան։ Թ. 1669.

— Իսահակ վարդապետ Տ. Միքայէլեանին, որը կարգուեց գանձապահ վանակ. կառավարութեան, Թ. 1670.

— Տ. Յուսիկ եպիսկոպոսին, որին պատուիրուեց Տաթևու փոխանորդ և Նոր Բայազէտի գործակալ ընտրելու։ Թ. 1678.

— Երևանի Կոնսիստորիային, Մեղրու գործակալութիւնը Հին Նախիջևանի փոխանորդութեան ենթարկելու համար։ Թ. 1673.

— Յովել վարդապետին, որը կարգուեց Հոռոմոսի վանքի վանահայր։ Թ. 1682.

— Կարուց հոգ. Կառավարութեան, նոյն իմաստով։ Թ. 1683.

— Սալմաստեցի Գասպար Յովհաննիսեանին և Ստեփան Յովհաննիսեանին Սալմաստի եկեղեցւոյ շինութեան հանգանակութեան համար։

— Սինոդին, որով միաբաններից հետևեալները նշանակւում են այս պաշտօններում, Բառնաբաս վարդապետ Տաթևի միաբան, Գեղամ վարդապետ Հաղբատի վանահայր, Միքայէլ վ. Սևան կամ Շահնապատ, Ստեփան վ. իւր հայրենի տունը 15 ր. ռոճկով, Յովել վ. Հոռոմոս վանք, Աբրահամ վ. Խծկոնից վանք, Հմայեակ վ. Կեչառիսու վանք, Անտօն վ. Զարեքայ վանք, Ընձակ վ. Մաղնի վանահայր և գործակալ, դպիր Խաչատուր Բջնի անտառապահ։ Թ. 1694.

— Սինոդին, Կարապետ վարդապետից 2050 ռուբ. Աստուածաշունչի դրամը պահանջելու համար։ Թ. 1718.

— Մակար քահանայ Անտօնեանին աւագութիւն տալու համար։ Թ. 1729.

*— Ղևոնդ քահանայ Սիմէօնեանցին, Սալմաստի Սաւրա գիւղի դպրոցի շինութեան հանգանակութեան համար։ Թ.* 1730.

*— Նոր Նախիջևանի նորընտիր հոգաբարձուներին հաստատութեան համար։ Թ.* 1537.

*— Եկատերինոդար քաղաքի նպաստամատոյց Յանձնաժողովին հաստատութեան համար։ Թ.* 1538.

---

*Բ.*

*Հայրապետական գոհունակութիւնք եւ օրհնութիւնք.*

Կոնդակ *Յանուն իշխանուհի տիկ. Էլիզայի Նեվրուզ* 405 *ռ. նուիրաբերութեան համար նորա ամուսին Արտակ խանի մահուան առթիւ։ Թ.* 1087.

*— Նոր Ջուղայեցի վերաբնակ Հին Նախիջևանի Աբրահամեանց եղբայրներին բարեգործութեան առթիւ։ Թ.* 1111.

*— Գ. Միհրան Չէրազի անունով նուիրաբերութեան համար։ Թ.* 1113.

*— Բարդող փաշայի անունով նուիրաբերութեան անունով։ Թ.* 1114.

*— Ջաւադ Գրիգորեանի անունով եկեղեցու շինութեան համար։ Թ.* 1115.

*— Թանթոյի հայերին* 294 *ռ. նպաստի համար։ Թ.* 1304.

*— Մանջուրիայի Խարբին քաղաքի հայոց գաղութի անունով Կովկասի հայ արկածեալներին* 2000 *ռ. նուիրաբերելու համար։ Թ.* 1392.

*— Աղէքսանդրիայի հայոց նպաստամատոյց Յանձնաժողովի անունով* 140 *անգլ. ոսկի հանգանակելու առթիւ վերոյիշեալ նպատակով։ Թ.* 1394.

— *Բագուայ հայոց կուլտուրական միութեան անդամներին, որոնց գործունէութիւնը օրհնուեց։* Թ. 1523.

— *Տիկին Էկատերինա Լիոնիդովնա Ցրէնկէլին, արկածեալների օգտին հանգանակուած* 4000 *րուբլու համար։* Թ. 1529.

— *Պետրոս էֆէնտի Կարապետեանին—Գահիրէում—* Թ. 1540.

— *Վաղարշապատի «Գրադարան-Ընթերցարանի» հիմնադիր օրիորդներին։* Թ. 1581.

— *Եսայի Տ. Բարսեղեան Աքովեանցին Օձուն գիւղի դպրոցը կառուցանելուն համար։* Թ. 1651.

— *Արիստակէս քահանային, լանջախաչի համար։* Թ. 1717.

---

Գ.

*Հայրապետական պարգեւք.*

Կոնդակ *Խուչչիբելակ գիւղի ծխատէր Գարեգին քահանայ Աբրահամեանի անունով, որով լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։* Թ. 1209,

— *Մարգարա գիւղի ծխատէր Մովսէս քահանայ Մարգարեանի անունով, որով շնորհուեց աւագութեան պատիւ։* Թ. 1208.

— *Գորիս ծխատէր Գարեգին քահանայ Տ. Մինասեանի անունով, որով կամիլաւկա կրելու իրաւունք շնորհուեց։* Թ. 1210.

— *Գառնիքասար գիւղի ծխատէր Մատթէոս քահանայ Տ. Մարտիրոսեանի անունով, որով լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։* Թ. 1211.

— *Կ. Պօլսոյ ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ ծխատէր*

Մեսրոպ քահանայի անունով, որով լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ Թ. 1221.

— Աղեքսանդրիոյ եկեղեցւոյ ծխատէր Մաշտոց քահանայ Բզնունւոյ անունով, որով ծաղկեայ փիլոն և լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ Թ. 1231.

— Շուշուայ եկեղեցւոյ ծխատէր Մուշեղ քահանայ Վարդապետեանի անունով, որով շնորհուեց աւագութեան պատիւ։ Թ. 1232.

— Բագուայ եկեղեցւոյ ծխատէր Մեսրոպ քահանայ Տ. Ոսկանեանի անունով, որով շնորհուեց աւագութեան պատիւ։ Թ. 1233.

— Ատրպատականի Առաջնորդ Տ. Եղնիկ եպիսկոպոսի անունով, որով շնորհուեց արքութեան տիտղոս։ Թ. 1238.

— Խորէն վարդապետ Լազարեանի անունով, որով լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։

— Երևանցի Ղևոնդ քահանայ Աթանասեանի, որին կամիլաւկա կրելու իրաւունք շնորհուեց։ Թ. 1243.

— Գօրուայ Յակովբ քահանայ Խուցեանին, որին շնորհուեց լանջախաչ կրելու իրաւունք։ Թ. 1293.

— Զարդախլու գիւղի Գէորգ քահանայ Մանասեանին, որին շնորհուեց լանջախաչ կրելու իրաւունք։ Թ. 1294.

— Սանահնի Զաքարիա վարդապետին, որին շնորհուեց վարդապետական խաչ կրելու իրաւունք։ Թ. 1295.

— Պօղոս քահանայ Բեդելեանին, որին շնորհուեց կամիլաւկա կրելու իրաւունք։ Թ. 1435.

— Գէորգ քահանայ Բէլլէ-Շահինեանին, նոյն առթիւ։ Թ. 1436.

— Մարտիրոս քահանայ Զատիկեանին, որին կամիլաւկա կրելու իրաւունք շնորհուեց։ Թ. 1503.

— Ս. քահանայ Տ. Յովսէփեանցին, որին լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ Թ. 1522.

— Քարահունջի քահանայ Տ. Սահակին կամիլաւկայի համար։ 1575.

— Գօրիսի Տ. Խորէն քահանային, կամիլաւկայի համար։ Թ. 1576.

— Ստաւրապօլի Կարապետ քահանայ Եագոյեանին, լանջախաչի համար։ Թ. 1642.

— Արմէն գիւղի Մարտիրոս քահանայ Տ. Նահապետեանին, լանջախաչի համար։ Թ. 1643.

— Ս. Խաչ քաղաքի Գէորգ քահանայ Տ. Մելքիսեդեանին, լանջախաչի համար։ Թ. 1645.

— Ամերիկայի Առաջնորդ, Տ. Յովսէփ արքեպիսկոպոսին, մի մատանի շնորհելու մասին։ Թ. 1646.

— Խլաթաղի Գրիգոր քահանայ Տ. Մինասեանին, կամիլաւկայի համար։ Թ. 1698.

## ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Սեպտեմբերի 4-ին Սինոդը լուծեց Տփխիսեցի Աննա Յարութիւնեանի պսակը Սարգիս Գրիգորեանի հետ, և թոյլ տուեց մարդուն նորից ամուսնանալ։

Սեպտեմբ. 6-ին Սինոդը Գէորգ Տ. Գաբրիէլեանին ձեռնադրութեան հրաման տուեց Դղլչախչախ գիւղի վերայ։

Սեպտեմբ. 11-ին Սինոդը պատուիրեց բոլոր Կոնսիստորիաներին ամեն տարի ներկայացնելու օրթոդոքս դաւանութիւնից Հայաստանեայց եկեղեցու ծոցը մտնողների ցուցակը։